

ԱԳՈՐԹ Լրատու

ՀՈԿՏԵՄԲԵՐ 27 - ՆՈՅԵՄԲԵՐ 5 2015 Թ. ԹԻՎ 28 (2083)

ՏԱՍԵՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՍ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



Ավստրիայի զարգացման գործակալության պատվիրակությունը մեր հանրապետությունում է

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Ավստրիայի զարգացման գործակալության պատվիրակությանը, որը գլխավորում էր Օրգանական գյուղատնտեսության աշակցության նախագահություն ծրագրի ղեկավար Դեյվիդ Մուքենհուբերը:

Հանդիպման նպատակն էր՝ քննարկել Գործակալության հետ համատեղ իրականացվող ընթացիկ և առաջիկա ծրագրերը, մասնավորապես, օրգանական գյուղատնտեսության զարգացման (OAS) ծրագիրը, որը նախատեսվում է իրականացնել Եվրամիության և Ավստրիայի զարգացման գործակալության աջակցությամբ: Ծրագրի տևողությունը 37 ամիս է, կմեկնարկի ընթացիկ տարվա դեկտեմբեր ամսին:

«Օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեր ոլորտի կարևորագույն ուղղություններից է: Մենք օրգանական գյուղմթերքի արտադրության և արտահանման ծավալների ավելացման լայն հնարավորություն ունենք, և համոզված ենք, որ այս ծրագիրը կնպաստի մեր երկրում որակյալ գյուղմթերքի արտադրությանը և դրանով իսկ օրգանական գյուղատնտեսության զարգացմանը», - նշել է նախարար Ս. Կարապետյանը:

Պարոն Մուքենհուբերը, իր հերթին, նախարարին համառոտ ներկայացրել է ծրագրի բովանդակությունը, դրա բաղադրիչները՝ ընդգծելով, որ ծրագրի կարևոր բաղկացուցիչներից կլինեն նաև համապատասխան օրենսդրության բարելավումն ու լայն հասարակայնության իրազեկումն օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ:

Միևնույն ժամանակ նախարարը նպատակահարմար է համարել, հնարավորության դեպքում, ծրագրում ներառել նաև օրգանական գյուղատնտեսության ոլորտում փորձի փոխանակման և հայ մասնագետների վերապատրաստման հարցը: Հանդիպման ընթացքում կողմերը համոզվում են հայտնել, որ մեկնարկվող ծրագիրը կունենա արդյունավետ և բարեհաջող ընթացք:

Ռազմավարության իրականացում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի սպանալիքների նվազեցման գործակալության պատվիրակության (DTRA) հայաստանյան գրասենյակի նոր ղեկավար Մայրո Մեթյու Փոուփի գլխավորած պատվիրակությանը:

Գործակալությունը մեր երկրում իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարությանը երկրի անասնաբուժության և առողջապահության ոլորտները Կենդանիների կառավարության համաշխարհային կազմակերպության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիմնական սկզբունքներին համապատասխանեցնելու հարցում, ինչը կնպաստի Հայաստանում հատուկ վտանգավոր պաթոգենների հայտնաբերման, արտադրման և արձագանքման համակարգերի հզորացմանը:

Գործակալության աջակցությամբ, արդեն ավարտվել է «Խոզերի աֆրիկական ժանտախտի համաճարակաբանական կարգավիճակը և հսկողությունը Հայաստանում» ԱՄ-3» ծրագիրը, և ներկայումս ընթացքի մեջ է «Արևելյան Եվրոպայում խոզերի աֆրիկական ժանտախտի Եկոլոգիայի և համաճարակաբանության մասին հանրային իրազեկում, վերահսկման և կանխարգելման նպատակով» ուսուցման տրամադրում, մեթոդների և ռազմավարությունների իրականացում՝ TAP-A1» ծրագիրը:

Ողջունելով հյուրին՝ նախարար Սերգո Կարապետյանը բարձր է գնահատել Հայաստանում Գործակալության կողմից իրականացվող ծրագրերը: Այս ենթատեքստում նախարարը մասնավորապես ընդգծել է կենտրոնական անասնաբուժական ռեֆերենս լաբորատորիայի կառուցման դերն ու նշանակությունը մեր երկրի համար: Նախարարի խոսքով՝ միաժամանակ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել մարզերում գործող անասնաբուժական լաբորատորիաների վերազինման համար, քանի որ առանց ժամանակակից սարքավորումների, անհնար է իրականացնել ճշգրիտ ախտորոշիչ աշխատանքներ: Նախարար Սերգո Կարապետյանը հյուրերի ուշադրությունը հրավիրել է նաև երկրում գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման անհրաժեշտությանը, առանց որի անասնաբուժական ծառայությունները լիարժեքորեն չեն կարող մատուցվել: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև DTRA գործակալության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետագա համագործակցության հեռանկարները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կառավարությունը հաստատել է ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2015թ.-ի հաշվետվությունը:

Պետական հաշվառումն իրականացվում է հողամասերի որակի և քանակի, նպատակային նշանակության, հողատեսքերի և դրանց գործառնական նշանակության, սեփականության և օգտագործման սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Կիրառարկվեն հողային հաշվեկշռի նորացված և ճշտված տվյալները, որից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական մարմինները, ոչ պետական կազմակերպություններն ու անձինք: «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակում, շինարարական աշխատանքների գծով լրացուցիչ 214 մլն դրամի համաֆինանսավորման պահանջ է առաջացել:

Կառավարությունը հաստատել է Տավուշի մարզում հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով վարձատրվող գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման փորձական ծրագրի իրականացման կարգը:

Ծրագիրը Տավուշի մարզում իրականացնելը պայմանավորված է մարզում գործազուրկության միջին հանրապետականից բարձր մակարդակով, սահմանամերձ համայնքների մեծ թվաքանակով, վերջին շրջանում ակտիվացած ռազմական գործողությունների հետևանքով մարզի համայնքներին հասցված կյանական վնասներով: Ծրագրի նպատակը՝ Տավուշի մարզում գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման միջոցով, սոցիալական լարվածության մեղմումն է:

Մարզպետարաններից աշխատանքային ցորենի առաջին վերարտադրության սերմացուի ներկայացված պահանջարկը բավարարելու նպատակով կառավարությունը որոշել է փոփոխություններ կատարել նախկինում ընդունված որոշումներից մեկում:

Պայմանավորված եղանակային բարենպաստ պայմաններով՝ մարզպետարաններից ներկայացվել է ևս 420 տոննա աշխատանքային ցորենի լրացուցիչ պահանջարկ: Այն կհատկացվի Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերին: Սերմացուի հատկացման արդյունքում ցանքատարածությունները կավելանան 1400 հեկտարով:

Կառավարության նիստում հավանություն է տրվել ՀՀ-ի և Միջազգային Չարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2015թ. սեպտեմբերի 3-ին ստորագրված «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրին:

Ծրագրի նպատակն է՝ բարելավել բնակչության տնտեսական և սոցիալական կարգավիճակը՝ իրականացման տարածքում ստեղծելով եկամտի աճի և զբաղվածության կայուն հնարավորություններ: Ծրագիրն ունի երեք բաղադրիչ: Մասնավորապես, ներդրումների և փոխառությունների, ինչպես նաև՝ տարբեր տեսակի կառավարման և տեխնիկական աջակցության տեսքով, աջակցություն կտրամադրվի աղքատ գյուղական արտադրողների հետ ամուր կապեր ունեցող և գյուղատնտեսական արժեշտային շրջանակում գործող փոքր և միջին մասնավոր ընկերություններին, կբարելավվեն հանրապետության 7 մարզերի՝ Շիրակ, Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Վայոց ձոր, Սյունիք և Արագածոտն գյուղական համայնքներում ջրամատակարարման և ոռոգման համակարգերը՝ առաջնահերթություն տալով աղքատության ամենաբարձր ցուցանիշ ունեցող տարածքներին: Հովիկ Աբրահամյանը, կարևորելով ծրագիրը, նշել է, որ պետք է հետամուտ լինել այն արագ իրականացնելու համար:

Օրգանական գյուղատնտեսություն	Էջ 3
Ընտանեկան ֆերմերություն	Էջ 5
Մասնագետի խորհուրդ	Էջ 7

ԱՇԽԱՏԱՆԵՍՅՈՒՆ ԱՅՑ

Հերթական գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման նոր կենտրոնը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում մասնակցել է գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը, Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարգսյանը, ֆերմերներ և հյուրեր:

Նոր մասնագիտացված կենտրոնը հիմնվել է Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամի կողմից ԱՄՆ ՄՉԳ կողմից ֆինանսավորվող «Հայաստանում մասնավոր խորհրդատվական ծառայությունների ստեղծում» ծրագրի շրջանակում: Այն համայնքի անասնաբույժներին, ֆերմերներին և գյուղատնտեսությանը զբաղվող անհատներին կտրամադրի տեխնիկական և բիզնես օժանդակություն՝ կենդանիների առողջությանը և անասնապահությանն առնչվող հարցերում: Կենտրոնում աշխատելու են բարձրակարգ մասնագետներ, որոնք ցանկացողներին կմատուցեն անհրաժեշտ խորհրդատվական ծառայություններ: «Վերջերս մարզի Հայրավանք համայնքում մենք բացեցինք նմանատիպ անասնաբուժական կենտրոն, իսկ մոտ օրերս արդեն ճամբարակում նախատեսված է թվով երրորդ կենտրոնի բացումը: Վստահ եմ, որ այս ծրագրի շնորհիվ մենք նոր ձեռքբերումներ ենք ունենալու, և այն կնպաստի մեր գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը, ինչ մեր հիմնական գերխնդիրն է», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:



Նախարարն իր խոսքում ընդգծել է, որ Գեղարքունիքի մարզը կարևոր տեղ է զբաղեցնում հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում. մասնավորապես, անասնաբուժական, հացահատիկի, կարտոֆիլի արտադրության, ինչպես նաև վարելահողերի մշակության ծավալների առումով ևս առաջատարն է:

Կարևորելով մարզում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը, որին վերջին տարիներին մեծապես նպաստել է CARMAC ծրագիրը՝ նախարարը նշել է, որ փոքր, մասնատված հողակտորներով հնարավոր չէ զարգացնել արդյունաբերական գյուղատնտեսություն, ուստի ոլորտին վերաբերող առաջիկա ծրագրերը ուղղված են լինելու հենց կոոպերացիայի զարգացմանը:

ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսն իր հերթին վերահաստատել է ԱՄՆ կառավարության պատրաստակամությունը Հայաստանի հետ գործակցել բոլոր ոլորտներում, շեշտելով, որ գյուղատնտեսությունը երկրի կենսական նշանակության կարևորագույն ոլորտներից մեկն է: Նա նշել է, որ դեսպանությունը, հիմնականում ԱՄՆ ՄՉԳ ծրագրերի միջոցով, աշխատում է ֆերմերային գործունեությանը ու



անասնապահությանը զբաղվողներին ապահովելու այնպիսի միջոցներով ու գործիքներով, որոնք թույլ կտան մրցունակ լինել տեղական ու տարածաշրջանային գյուղատնտեսական շուկաներում ու ծաղկում ապրել:

ՀԱՆԳԻՊՈՒՄ

Քննարկվել են սպանդանոցների ընթացիկ խնդիրները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հանդիպում՝ հանրապետությունում գործող սպանդանոցների սեփականատերերի հետ՝ ընթացիկ խնդիրները քննարկելու նպատակով:

Հանդիպման ընթացքում նախարարը մասնավորապես նշել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ արդեն իսկ կառուցվել և շահագործման են հանձնվել թվով հինգ սպանդանոցներ, առաջիկայում նախատեսվում է հանրապետության սպանդանոցային ցանցը ևս երկուսով համալրել, ինչը հնարավորություն կընձեռնի գյուղատնտեսական կենդանիների մորթն իրականացնել ժամանակակից սարքավորումներով՝ սպառողներին ապահովելով անվտանգ ու որակյալ մսով ու մամլթերքով:

Նախարարը նաև հավելել է, որ սպանդանոցների աշխատանքները պետք է հիմքեր ստեղծեն աստիճանաբար բակային մորթից հրաժարվելու և հետագայում նաև հարցին օրենսդրական կարգավորում տալու համար: «Մենք մեծապես կարևորում ենք սպանդանոցների աշխատանքը, քանի որ անչափ մեծ է դրանց դերը մեր երկրում սննդի անվտանգության ապահովման և առհասարակ, անասնապահության զարգացման խթանման գործում, և մեր նպատակն է՝ քննարկել ու լուծում տալ բոլոր խնդիրներին, որպեսզի շահագործման հանձնված սպանդանոցները սկսեն ամբողջ թափով աշխատել», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Հանդիպման ընթացքում սպանդանոցների սեփականատերերը նախարարին ներկայացրել են ընթացիկ իրավիճակն ու առկա խնդիրները: Ըստ այդմ՝ մի քանի սպանդանոցներ արդեն իսկ սկսել են մորթ իրականացնել, ունեն պայմանագրեր ներքին շուկայում, ինչպես նաև արտահանումներ են իրականացնում՝ մասնավորապես Իրանի Իսլամական Հանրապետություն, մյուս մասի մոտ կան իրացման խնդիրներ՝ կապված արտադրանքի մրցունակության հետ:

Քննարկման ընթացքում մասնակիցները կարևորել են հանրային սննդի օբյեկտներին մատարակարգվող միսը պարտադիր կարգով սպանդանոցային մորթի ենթարկելու հարցը: Նախարարը հորդորել է սպանդանոցների սեփականատերերին՝ քայլեր նախաձեռնել իրենց գործունեությունն ակտիվացնելու ուղղությամբ՝ ընդգծելով, որ պետությունը կարևորում է սննդի անվտանգության հարցը և պատրաստ է, իր հնարավորության սահմաններում, աջակցել խնդիրների լուծմանը:



ԲՆԱԳԱՀՊԱՆԱԿԱՆ

Արարատյան դաշտում խնայված ջրաքանակի շնորհիվ ապահովվել է ստորերկրյա ջրային ռեսուրսների բնական վերականգնման մակարդակը

2014-2015 թթ. կատարված աշխատանքների և ձեռք առնված միջոցառումների արդյունքում Արարատյան դաշտում, ընդհանուր առմամբ, խնայվել է 42,4 մ³/վրկ կամ տարեկան 1337.3 մլն. մ³ ջրաքանակ, ինչով ապահովվել է ստորերկրյա ջրային ռեսուրսների բնական վերականգնման մակարդակը, որը խախտվել էր սկսած 2007 թվականից՝ ձկնաբուծության զարգացման հետևանքով:

Այս մասին նշվել է ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի ունեցած Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների մշակման վերաբերյալ ներկայացված միջանկյալ հաշվետվության հանրային քննարկման ժամանակ:



Ինչպես տեղեկացնում է ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը, «Հայիդրո էն էր գ ան ա խ ա գ ի ծ» ՓԲԸ-ի ղեկավար Ժորա Այոյանը մասնավորապես զեկուցել է, որ 2014 թ.-ի երկրորդ կեսից ՀՀ բնապահպանության նախարարության կողմից Արարատյան դաշտավայրի

ինքնաշատրվանող հորատանցքերի նկատմամբ ձեռք առնված միջոցառումների շնորհիվ, խնայվել է 22.24 մ³/վրկ ջրաքանակ, այդ թվում՝ ձկնաբուծության ոլորտում՝ 17.4 մ³/վրկ, ոռոգման ոլորտում՝ 2.9 մ³/վրկ և խմելու-կենցաղային ոլորտում՝ 1.9 մ³/վրկ ջրաքանակ:

Բացի այդ, ՀՀ կառավարության N1111-Ն որոշման համաձայն՝ փոփոխություն է մտցվել ՋԹ-ով սահմանված ջրաքանակների նկատմամբ. եթե հին ՋԹ-ով ջրօգտագործումն Արարատյան դաշտում պետք է լիներ 46,4 մ³/վրկ, այդ թվում՝ Արմավիրի մարզում 13,6 մ³/վրկ, իսկ Արարատի մարզում՝ 32,8 մ³/վրկ, ապա նոր ՋԹ-ով այն կազմել է 26,7 մ³/վրկ, այդ թվում՝ Արմավիրի մարզում 6,2 մ³/վրկ, իսկ Արարատի մարզում՝ 20,5 մ³/վրկ, այսինքն կատարվել է 19,6 մ³/վրկ ջրաքանակի տնտեսում:

ՍԵՄԻՆԱՐ

ՉԻԼԻԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ ՄԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության աշխարհի օրվան ընդառաջ կազմակերպված միջոցառումների շրջանակում, Երևանում անցկացվել է սեմինար հայ գինեգործների համար՝ Չիլիի ժամանած փորձագետների մասնակցությամբ:



Սեմինարին ներկա էին ՀՀ գյուղատնտեսության փոխնախարարներ Գառնիկ Պետրոսյանը, Ռոբերտ Մակարյանը, Արմեն Հարությունյանը, ՀՀ-ում Չիլիի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Խուան Էդուարդո Էգիգուրեն, Հայ գինեգործների միության նախագահ Ավագ Հարությունյանը:

Սեմինարի ընթացքում գինու փորձագետ Նիկոլաս Կովալսկին և Մոսկվայում գինու և գաստրոնոմիայի միջազգային կենտրոնի նախագահ Լեոնիդ Գոլիբետերմանը ներկայացրել են Չիլիի խաղողագործության և գինեգործության զարգացման պատմությունը, առանձնահատկությունները և հաջողված փորձը, որի արդյունքում գինեգործությունն այսօր Չիլիի տնտեսության առաջատար ճյուղերից է, որի արտադրանքը ճանաչված է աշխարհում և մեծ սպառում ունի:

Երկրում հաջողել են նաև բնակչության շրջանում գինու օգտագործման մշակույթի ձևավորման հարցում: Գինու ներքին սպառումն այստեղ կազմում է տարեկան 15 լիտր՝ 1 շնչի հաշվով: Չիլին աշխարհի այն քիչ երկրներից է, որտեղ չկա ֆիլոքսերա: Ըստ Լեոնիդ Գոլիբետերմանի՝ պատճառը հողի բաղադրությունն է, որում բավականին բարձր է պղնձի պարունակությունը, բացի այդ, երկրում գործում է գինեգործության ոլորտը կարգավորող բավականին խիստ օրենսդրություն, յուրաքանչյուր խաղողի տնկի, որը հայտնվում է Չիլիում, շուրջ 6 տարի պարտադիր կարանտինային հսկողության է ենթարկվում:

Հայ գինեգործների միության նախագահ Ավագ Հարությունյանն իր հերթին հյուրերին ներկայացրել է հայ գինեգործության դարավոր պատմությունը, զարգացման փուլերը, ներկա իրավիճակն ու խնդիրները: Նրա խոսքով՝ Չիլիի փորձը մեզ համար շատ ուսանելի և օգտակար կարող է լինել: Այս առումով նա հատկապես կարևորել է փորձագետների ներգրավվածությունը և խորհրդատվական աջակցությունը Հայաստանի խաղողագործության զարգացման ռազմավարության մշակման աշխատանքներում:

Միջոցառման ավարտին մասնակիցների համար կազմակերպվել էր նաև չիլիական և հայկական արտադրության գինիների համեստ: Միջոցառումների շրջանակում Չիլիի դեսպանի հետ քննարկվել են նաև երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր, որոնց շուրջ նախատեսվում է առաջիկայում երկու երկրների գյուղատնտեսության նախարարությունների միջև ստորագրել համագործակցության մասին փաստաթուղթ:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒԴԱՏՆԵՏՈՒԹՅՈՒՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՑԱԾԻ ՄԱԿԱՐԴԱԿՆ Է

Օրգանական մթերքների կարևորությունն ու սպառումն աշխարհում գնալով մեծանում է: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում նշում են, որ Օրգանական գյուղատնտեսության զարգացումը ոլորտի կարևորագույն ուղղություններից է: Հայաստանում դրա զարգացման խոչընդոտներից մեկը քաղաքացիների ցածր իրազեկվածությունն է: Հայաստանում ի՞նչ վիճակում է օրգանական գյուղատնտեսությունը և զարգացման ի՞նչ հնարավորություններ ու խնդիրներ կան: Այս ու այլ հարցերի շուրջ Panorama.am-ը զրուցել է գյուղատնտեսության փոխնախարար Արմեն Հարությունյանի հետ:



- Ո՞ր մարզերում է օրգանական գյուղատնտեսությունը զարգացած:

- Հայաստանում այս պահին գործում է 60-70 սերտիֆիկացված օրգանիկ արտադրություն: Կարելի է ասել, բոլոր մարզերում էլ նման արտադրություններ կան, սակայն առավել շատ են Արմավիրում, Արարատում, Սյունիքում, Տավուշում: Հիմնականում արտադրում են միրգ, բանջարեղեն, հատապտուղներ, տարբեր տեսակի խոտաբույսեր, որոնք աճում են վայրի պայմաններում՝ անտառներում, սարերում: Սրանց սերտիֆիկացումն ավելի հեշտ է, գործընթացը տևում է մեկ տարի, իսկ սովորական արտադրության հիմնելու պարագայում՝ երեք տարի: Այդ տարիները համարվում են անցումային շրջան, երբ ավանդական գյուղատնտեսությունից անցում է կատարվում օրգանականին, և, այդ ընթացքում, հողն ազատվում է բոլոր ոչ բնական բաղադրիչներից, որոնք առկա են նրանում:

- Ո՞վ է տրամադրում սերտիֆիկատը:

- Հայաստանում սերտիֆիկատ տրամադրող մեկ կազմակերպություն կա՝ «Էկոգլոբ»-ը: Ցանկացած արտադրող այդ սերտիֆիկատով կարող է մթերքն արտահանել ցանկացած երկիր: Մինչ սերտիֆիկատ տրամադրելը, այդ կազմակերպությունը մոնիտորինգ է այցելություններ է իրականացնում տվյալ արտադրություն: Օրգանական գյուղատնտեսության ասելով հասկանում ենք, որ ցանկացած տիպի քիմիական նյութի, այդ թվում՝ թույների, օգտագործումն արգելված է: Օրինակ, գոմաղը քիմիական չէ, կարելի է օգտագործել օրգանական գյուղատնտեսության մեջ: Սահմանված են նաև ստանդարտներ, թե ինչ հեռավորության վրա պետք է լինի տվյալ հողակտորը ավանդական ճանապարհով մշակվող դաշտերից կամ ճանապարհներից: Կան որոշակի պահանջներ օրգանական սննդի փաթեթավորման ու տեղափոխման վերաբերյալ: Հասարակ օրինակ բերենք, եթե կաթը պլաստմասե տարայի մեջ վաճառեն, ապա դա այնքան էլ ճիշտ չէ, այն պետք է վաճառվի ապակե տարայով: Սերտիֆիկատ ստանալուց հետո տնտեսվարողն անընդհատ մոնիտորինգի ենթոք է լինում:

- Որտե՞ղ են սպառվում հայկական օրգանական մթերքները, ենթադրվում է, դրանք ավելի թանկ արժեն:

- Հիմնականում սպառումն իրականացվում է ներքին շուկայում, քանի որ փոքր տնտեսությունները դժվարանում են արտահանում կազմակերպել: Մենք ուսումնասիրություն չունենք, սակայն կարող ենք ասել, որ պտուղ-բանջարեղենի, մեղրի, խոտաբույսերի մարժան մեծ չէ: Երբ ուսումնասիրում ենք այլ երկրների թվերը, տեսնում ենք, որ ավելի բարձր է կենդանական ծագման մթերքների մարժան: Սակայն Հայաստանում անասնապահության ոլորտում դեռևս նման հաջողություններ չունենք:

Օրգանական սննդամթերքի պահանջարկն ամբողջ աշխարհում բավականին արագ մեծանում է, հատկապես զարգացած պետություններում մարդիկ ուզում են առողջ կենսակերպով ապրել: Համարտահանման հնարավորություններն են մեծ, համ գնային մարժան է բաժր, հետևապես այն դառնում է առավել բարձր արժեքային գյուղատնտեսություն: Փոքր տնտեսությունների զարգացման համար փորձում ենք տեղի շուկայի իրազեկման աշխատանքներ կատարել, որպեսզի այն տնտեսվարողները, որոնք հնարավորություն չունեն արտահանման, տեղում կարողանան սպառել: Մենք նախատեսում ենք աշխատել տնտեսվարողների հետ, որպեսզի սուպերմարկետ-

ներում օրգանական սննդի համար առանձին տեղեր հատկացվեն:

- Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման ի՞նչ հնարավորություններ կան:

- Դեկտեմբերի 15-ին մեկնարկելու է օրգանական գյուղատնտեսության զարգացման (OASI) 37 ամիս տևողությամբ ծրագիրը, որը նախատեսվում է իրականացնել Եվրամիության և Ավստրիայի զարգացման գործակալության աջակցությամբ: 3.2 մլն Եվրո արժեքով ծրագրի շրջանակում, չորս բաղադրիչներով աշխատանքներ ենք իրականացնելու՝ իրավական դաշտի, ինստիտուտների բարելավում, արտադրողներին աջակցության ցուցաբերում, դրամաշնորհների տրամադրում, իրազեկման բարձրացման ուղղված միջոցառումների իրականացում: Զաղաքացիները չգիտեն, թե ինչ է իրենից ներկայացնում, օրգանական, Եկո սննդամթերքը, չորրորդ բաղադրիչը կլինի արտահանման հնարավորությունների բացահայտումն ու ընդլայնումը: Եթե կարողանանք, մենք մտադիր ենք աշխատել օրգանական սննդամթերք արտադրող Եվրոպական խոշոր մի քանի ընկերությունների հետ, որպեսզի կոոպերատիվներ ստեղծենք Հայաստանում, օրինակ՝ խոտաբույսեր հավաքող մի քանի խմբեր հավաքել, ապա մի քանի հարց կարող ենք միաժամանակ լուծել: Մենք կարող ենք չօգտագործվող հողերն էլ ներգրավել այս ծրագրում:

- Կա՞ն խնդիրներ, որոնք խոչընդոտում են Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացմանը:

- Այս պահին հիմնական խնդիրը մարդկանց իրազեկվածության ցածր մակարդակն է: Կան, իհարկե, մարդիկ, որ գնահատում ու մշտապես օգտագործում են օրգանական սնունդը: Երևանում գործում է մասնաճյուղի խանութ, որտեղ վաճառվում են միայն օրգանական սերտիֆիկացված ապրանքներ: Այն բավականին հաճախորդներ ունի: Ուղղակի ընդհանուր արդյունաբերության զարգացման համար դեռևս խոչընդոտ է իրազեկվածության ցածր մակարդակը:

- Հաշվի առնելով Հայաստանում սոցիալ-տնտեսական վատ պայմաններն ու օրգանական սննդի թանկ լինելը՝ իրազեկվածության պակասից մարդիկ այն չեն գնո՞ւմ:

- Բուսական ծագման ապրանքների գներն այնքան էլ թանկ չեն, գրեթե գնային նույն սեգմենտում են: Ամբողջ աշխարհում այսօր օրգանական ապրանքներ սպառում են միջին ու ավելի բարձր խավի մարդիկ, կամ նրանք, ովքեր առողջությունն ավելի են կարևորում, օրինակ, նրանք կարող են գնել կես կգ օրգանական սերտիֆիկացված ապրանք, մեկ կգ սովորական պայմաններում աճեցրած փոխարեն: Հնարավորություններ միշտ էլ կան, ուղղակի իրազեկել է պետք: Ինչքան սպառողն իրազեկված լինի, այնքան արտադրողը շահագրգռված կլինի շատ արտադրել, երկուստեք շահավետ է:

- Ինչպե՞ս համոզվել, որ գնում ենք իսկապես օրգանական սնունդ:

- Մանրածախ ցանկացած կետ, անհրաժեշտության դեպքում, սպառողին պետք է ներկայացնի տվյալ արտադրողի սերտիֆիկատը:

ՀԱՍՏՈՂՈՎ

ԱՐՈՏՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության «Կենսաբազմազանության կայուն կառավարումը Հարավային Կովկասում» ծրագիրը և «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն՝ Շվեյցարիայի Չարգացման և Համագործակցության գործակալության ու Ավստրիական զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող անասնապահության զարգացման ծրագրերի շրջանակներում, վերջերս կազմակերպել էր «Արտավայրերի ներկա վիճակն ու դրանց արդյունավետ կառավարմանն ուղղված միջոցառումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով համաժողով:

ԳԾԻԳ-ի գրասենյակի ներկայացուցիչները և այլք:



«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի նախագահ Մ. Այվազյանը ողջունեց ներկաներին՝ նշելով, որ հետագայում շարունակելու են համագործակցությունը՝ մյուս համայնքներում ևս զարգացնելու արտավայրերի կայուն կառավարումը: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների փոխնախարար Վաչե Տերտերյանը կարևորեց հանդիպումը՝ նշելով, որ նման ծրագրերը մեր համայնքների համար լուծում են էկոլոգիական խնդիրներ, իսկ ռեսուրսների ճիշտ օգտագործման դեպքում ոլորտում կունենանք հաջողություններ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ փոխտնօրեն Ա. Վանյանը հավելեց, որ անասնապահության զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է՝ կոոպերատիվների ստեղծումն ու տոհմային գործի բարելավումն է:

Նաև միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) Հայաստանյան գրասենյակի ղեկավար Աննե Դորիթ Զեմփան: Ըստ նրա՝ ծրագիրը նպատակ ունի թիրախային համայնքներում կին և տղամարդ ֆերմերների համար ապահովել տնտեսական հնարավորությունների և եկամտի աճ՝ խթանելով արտոնների կառավարման համակարգի բարելավումը և կաթի ու մսի շուկաների զարգացումը:

Ծակցության գործակալության կողմից ֆինանսավորված «Անասնապահության զարգացում Սյունիքի մարզում» ծրագրի տրամաբանական շարունակությունն է և մշակվել է՝ հաշվի առնելով նախկինում ունեցած արդյունքներն ու ձեռքբերումները: Ծրագրի նպատակն է՝ նպաստել Սյունիքի և Վայոց ձորի մարզերում անասնապահության ոլորտում ներգրավված կին և տղամարդ ֆերմերների եկամուտների աճին և տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը: Ծրագիրն ընդգրկում է Սյունիքի և Վայոց ձորի մարզերի 100 գյուղական համայնքներ՝ ավելի քան 60 000 բնակչությամբ: Այնուհետև փորձագետներ Ա. Դանիելյանը, Գ. Թովմասյանը ներկայացրեցին արտավայրերի կառավարման գործիքակազմը, մշտադիտարկման ձեռնարկն ու կառավարմանն ուղեցույցը, արտոնների պլանավորման և գնահատման գործընթացները՝ ՏՏ տեխնոլոգիաների կիրառմամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ոլորտին առնչվող բազմաթիվ հարցեր: Արտավայրերի համայնքապետները և դրանց ազդեցությունն ու առկա խնդիրները, ինչպես նաև «Կլիմա Իսթ» պիլոտային ծրագրի իրականացման ընթացիկ վիճակն ու ձեռքբերումները, համայնքային մակարդակում տարբեր ծրագրերի գործունեության և դրանց ազդեցությունն ու առկա խնդիրները, ինչպես նաև «Կլիմա Իսթ» պիլոտային ծրագրի իրականացման ընթացիկ վիճակն ու ձեռքբերումները:



Համաժողովի ընթացքում քննարկվել են նաև «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» իրականացման ընթացիկ վիճակն ու ձեռքբերումները, համայնքային մակարդակում տարբեր ծրագրերի գործունեության և դրանց ազդեցությունն ու առկա խնդիրները, ինչպես նաև «Կլիմա Իսթ» պիլոտային ծրագրի իրականացման ընթացիկ վիճակն ու ձեռքբերումները:

Լիանա Շախնազարյան

ԿՐԹԱՎԱՆ

ՀԱԱՀ ԱԳՐՈՒԹԻՋՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՆՇՎԵՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՕՐԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում նշվեց Ծնողների օրը՝ 15-րդը Կենտրոնի 15-ամյա պատմության ընթացքում:



Ուսանողների ծնողների հետ ավանդական հանդիպումը ԱՌԿ-ի մշակույթի անբաժան մասն է. այդ օրը ծնողները ծանոթանում են իրենց երեխաների համար միջազգային որակի կրթություն ապահովող եզակի կրթական միջավայրին, հնարավորություն ստանում հանդիպելու դասախոսների և աշխատակազմի հետ, որպես նույն նպատակին ծառայող գործընկերների, քննարկել երեխաների ապագա աշխատանքային կարիերային առնչվող հարցեր:

Ավագ կուրսեցիներ Լուիզա Փոլադյանի և Վարդուհի Հայրապետյանի ներկայացումը՝ ԱՌԿ-ի գործունեության, ուսանողական կյանքի, ՀԱԱՀ-ում և առհասարակ երկրի բարձրագույն կրթության համակարգում կենտրոնի լուրջ դերակատարության, մասնագիտական աշխատանքային շրջանավարտների զբաղվածության՝ հավասարը չունեցող ցուցանիշների մասին: Այնուհետև ծնողները, ուսանողների և դասախոսների ուղեկցությամբ, շրջեցին ԱՌԿ-ի հարկաբաժիններում, եղան լսարաններում, համակարգչային և տեսակապի սրահներում, հաճույքով մասնակցեցին իրենց պատվին կազմակերպված ընդունելությանը:

Ծնողների օրը ԱՌԿ-ի ուսանողների ծնողներին կապում է կրթության հետ: Այդ օրը համալսարանի և կենտրոնի հետ նրանց գործընկերությունը, գուտ ուսման վարձի մատակարարման իրողությունից բարձրանում է մի նոր մակարդակի՝ նրանց դարձնելով ԱՌԿ-ի ընտանիքի մի մասը:

Սոս Ավետիսյան
ԱՀԿԿ հիմնադրամի և ԱՌԿ-ի հանրային կապերի մասնագետ

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին շարունակվում է պարենային կարտոֆիլի ցանքատարածությունների ընդարձակումն ու արտադրության ծավալների ավելացումը:

Մեր հանրապետությունում սեփական արտադրության հաշվին ոչ միայն ապահովվում է պարենային կարտոֆիլի ներքին սպառման ամբողջ պահանջարկը, այլև հնարավորություններ են ստեղծվում մեծաքանակ արտահանումների համար: Այդ առումով բացառություն չէ նաև ընթացիկ տարին: Ըստ կանխատեսումների՝ կարտոֆիլի համախառն բերքը կկազմի ավելի քան 770 հազար տոննա, միջին բերքատվությունը՝ 235-240 գ/հա:



Համեմատության համար պետք է նշել, որ եվրոպական երկրներից Բելգիայում կարտոֆիլի միջին բերքատվությունը կազմում է 563 գ/հա, Հոլանդիայում՝ 535.0, Գերմանիայում՝ 530.0 գ/հա և այլն, իսկ պարենային կարտոֆիլի բերքը նույնիսկ հասնում է 900-1000 գ/հա-ի: Մեր հարևան երկրներից Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ 250 գ/հա է, իսկ Թուրքիայում՝ 315.0 գ/հա:

Գեղարքունիքի և Շիրակի մարզերի առանձին կարտոֆիլագործներ որոշ հողատարածքներից, հեկտարի հաշվով, ստանում են 500-600 ցենտներ բերք: Բերված տվյալների համեմատությունից պարզ է դառնում, որ մեր հանրապետությունում կարտոֆիլի բերքատվության բարձրացման ներուժը շուրջ 2.5 անգամ ավելի պակաս է օգտագործվում, քան հնարավոր է:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԵՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

Արագածուրի մարզի Ոսկեվազ գյուղի ֆերմեր Միմոն Միմոնյանի բազմաճյուղ փերմերությունը ճանաչում ունի ոչ միայն մարզում, այլև՝ հանրապետությունում: Միմոնն առաջիններից է, որ վաղ զարնանք ստանում է ջերմոցային երակ, որը շուկայահասնելուց հետո անմիջապես վաճառվում է, քանի որ բոլորը գիտեն Միմոնի անեղբայրած երակի քաղցր համի մասին:

«Տարիներ առաջ «Չազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակում, առաջարկություն արվեց անցնել ոռոգման կաթիլային եղանակին: Տեխնոլոգիան անծանոթ էր և այն ներդնելու համար ռիսկ էր պահանջվում: Ես համաձայնեցի և ջերմատունն ամբողջությամբ անցավ կաթիլային ոռոգման», - հիշում է Միմոնյանը: Այնուհետև ստացվեց աննախադեպ բերք, մի քանի տարի անընդմեջ թե ջուրը, որի խնդիրը իրոք առկա է Ոսկեվազում, և թե պարարտանյութը: Միմոնի փորձից ելնելով, գյուղի ջերմատնային տնտեսությունների շուրջ 60 %-ն արդեն անցել է ոռոգման կաթիլային եղանակի: Այլևս չկա նախկին մտավախությունը, ֆերմերները գոհ են արդյունքից:



Միմոն Միմոնյանը սեփականաշատորհման արդյունքում ստացել է 1600 մ² հողատարածք, այնուհետև գնելով նոր հողատարածքներ, որոնք չէին մշակվում նախկին տերերի կողմից, ավելացրել է մշակովի հողատարածքները: Ֆերմերն այժմ աճեցնում է խնձոր, սև սալոր, ծիրան, դեղձ, կեռաս և այլ պտղատեսակներ: Բոլոր սորտերն էլ ինքն է ընտրել: Սկզբում ցանել է կորիզները, այնուհետև ստացել տնկին, մշա-



կել է և այժմ արդեն ունի ցուցադրական այգի: Մասնագիտությամբ ինժեներ-մեքենաշինարարը խորացել է նաև մեղվաբուծության մեջ: Տարիների ընթացքում այնքան գիտելիքներ է ձեռք բերել, որ համագյուղացիները նրանից խորհուրդներ են հարցնում՝ հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների կատարման, մեղուների խնամքի և մասնագիտական այլ հարցերի վերաբերյալ:

Խորհրդատվություն ստանալու նպատակով ֆերմերն օգտվում է նաև Արագածոտնի ԳԱՄԿ-ի ծառայությունից, որն իրեն աջակցում է բույսերի

վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ կատարելու գործում: «Ելակը չորանում էր, դիմեցի ԳԱՄԿ-ին: Մասնագետներն այցելեցին տնտեսություն, նմուշ վերցրեցին և ուղարկեցին լաբորատորիա՝ հետազոտման: Պարզվեց, որ պատճառն արմատային տիզն է: Պայքարի միջոցառումներ կատարեցինք՝ օգնեց: Յիմես եմ գյուղացիներին խորհուրդ տալիս, թե ինչ միջոցառումներ կատարեն, որպեսզի արդյունավետ լինի», - պատմում է ֆերմերը:

Ընտանեկան ֆերմերության գործում իրենց ակտիվ մասնակցություն են բերում նաև տիկինը՝ Արմինե Մատուկյանը, որդին՝ Դավիթը և դուստրերը՝ Լորեան և Հասմիկը: Դավիթը դեռևս

12 տարեկան է, բայց արդեն օգնում է ընտանիքին իր աշխատանքով: Առավոտ վաղ մասնակցում է բերքահավաքին, կատարում այն աշխատանքները, որոնք կարողանում է: Ի դեպ, երեխաները դպրոցում սովորում են գերազանց, իսկ ֆերմերային աշխատանքային իրենց մասնակցությունը նրանց դաստիարակում է աշխատասիրությամբ: Ամռանը աշխատանքներում ընդգրկվում են նաև սեզոնային աշխատողներ:

Տնտեսությունում անընդհատ նոր քայլեր են արվում՝ գյուղատնտեսության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Օրինակ, այս տարի Իտալիայից ներկրել են ելակի նոր սորտ, որի յուրաքանչյուր թուփ տալիս է 2-3 կգ բերք: Այն քաղցրահամ է, դիմացկուն, փոխադրունակ, որը հնարավորություն կտա նաև արտահանել: Այժմ զբաղված են թփերի բազմացմամբ:

«Հայաստանում ջերմոցային տնտեսությունները մեծ ապագա ունեն, քանի որ շատ են արևային օրերը: Իսկ այգետարածքներում պետք է տեղադրվեն կարկտապաշտպան ցանցեր: Նոր տեխնոլոգիաները պետք է հասանելի լինեն նաև հայ գյուղացու համար: Բացի այդ, պետք է կարգավորվի նաև արտահանման խնդիրը, որպեսզի գյուղատնտեսությունը զարգանա», - եզրահանգում է ֆերմերը:

Նրա կարծիքով, գյուղատնտեսությանը պետք է տրամադրել նաև ցածր տոկոսադրույքով և երկարաժամկետ վարկեր:

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՐԸ ՎԵՐԱԾՎԵՑ ՏՈՆԻ

ՄԱԿ-ը հոկտեմբերի 15-ը հռչակել է «Գյուղի կանանց միջազգային օր»՝ ի նշան գյուղի և գյուղատնտեսության զարգացման գործում կանանց դերի և մասնակցության կարևորության: Ըստ փաստացի տվյալների՝ աշխարհում մոտ 1.6 մլրդ կին ներգրավված է գյուղատնտեսական աշխատանքներում: Արտադրող գյուղմթերքների կեսից ավելին աճեցվում է կին ֆերմերների տնտեսության աշխատանքի շնորհիվ:

Գյուղի կանանց միջազգային օրվա կապակցությամբ, հոկտեմբերի 31-ին «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ, Ֆրանսիայի Ռոն - Ալպեր տարածաշրջանի ֆինանսավորմամբ իրականացվող «Դիտակ, Ոսկեվան, Սուլակ և Սաղմոսավան գյուղերի կանայք՝ հանուն կայուն գյուղատնտեսության» ծրագրի շրջանակում, կազմակերպել էին գյուղմթերքների ցուցահանդես-վաճառք: Տոնավաճառում ՀՀ Արագածոտնի, Տավուշի, Արարատի և Կոտայքի մարզերի 4 համայնքների կին ֆերմերները ներկայացնում էին իրենց արտադրած բերքն ու բարիքը: Այս անգամ ցուցահանդես-վաճառքը հորելյանական էր, քանի որ տոնը կազմակերպության կողմից նշվում էր արդեն 5-րդ տարին:



Միջոցառման բացմանը ողջունյի խոսքով հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը: «Բացի մեր հող ու ջրից, նաև հենց կանանց աշխատասիրությամբ է պայմանավորված մեր պտուղ բանջարեղենի համն ու

որակը, քանի որ վերջիններս հողի են դնում իրենց գործի մեջ, դրա համար էլ արդյունքը տարբերվում է անզուգական համով», - ասում է պրն. Մակարյանը: Ծրագիրն իրականացվում է մարզերում գործող գյուղի կանանց զարգացման ակտիվ կենտրոնների միջոցով, որոնք համակարգվում են ակտիվ կանանց կողմից: «Նպատակն այն է, որպեսզի գյուղի կանայք,



կատարած աշխատանքի արդյունքում, հնարավորինս ավելի շատ եկամուտ ստանան: Աշխատանքներ ենք տանում արտադրանքի ապրանքանիշ ստեղծելու ուղղությամբ», - տեղեկացնում է ՀԿ-ի ներկայացուցիչ Լուսինե Նալբանդյանը:

Ողջունի խոսքը, շնորհավորանքն ու շնորհակալություններն էր բերել նաև ծրագրի ֆինանսավորող, Ռոն-Ալպեր տարածաշրջանի ներկայացուցիչ Անահիտ Դավթյանը: Վերջինս առանձնակի շնորհակալություն հայտնեց և կարևորեց Ոսկեվան համայնքի կանանց մասնակցությունը ծրագրին:

Ոսկեվանցիները ցուցահանդեսին ներկայացրել էին ՀԿ-ի աջակցությամբ տրամադրված արևային չորանցներով չորացված չորերի հարուստ տեսականի, ինչպես նաև՝ բուսական թեյեր, բուժիչ խոտաբույսեր և այլն: «Տարեցտարի ավելացնում ենք թե քանակը և, թե տեսականին, քանի որ տեսնում ենք եկամուտների ավելացում», - պատմում է համակարգող Մայրանուշ Ալեքսանյանը: Արագածոտնի մարզի Սաղմոսավան գյուղի կանանց խումբը բաղկացած է 15 անդամից, որոնց թիվը շարունակում է ավելանալ: Արտադրանքի իրացման նպատակով գյուղի կենտրոնում տեղադրվել էին տաղավարներ: Լաուրա Միքայելյանը նշեց, որ գոհ են արդյունքներից:

Կոտայքի մարզի Սուլակ գյուղի կանանց խմբի ներկայացուցիչ Ռաիսա Խաչատրյանն էլ տեղեկացրեց, որ արտադրում են օրգանիկ գյուղմթերքներ, գրեթե չեն օգտագործում թունաքիմիկատներ և, նույնիսկ, պարարտանյութեր: Սուլակ ներկայացել էր բանջարեղենի և հատիկաբերի մշակաբույսերի հարուստ տեսականիով: Արարատի մարզի Դիտակ գյուղի կանանց խմբի ներկայացուցիչ Անահիտ Աթոյանի տեղեկացմամբ, իրենք զբաղվում են չորագործությամբ, արտադրության մեջ օգտագործելով ոչ միայն իրենց այգիների, այլև այլ ֆերմերների պտուղները: Չնայած այն հանգամանքին, որ չրատեսակների պատրաստման ժամանակ շաքարաջուր չեն օգտագործում, այնուամենայնիվ, նրանց արտադրանքն աչքի է ընկնում ապրանքային տեսքով:

Ամբողջ օրը գյուղատնտեսական շուկայում անցկացնելուց, իրենց բերքն ու բարիքը վաճառելուց հետո գյուղի կանանց սպասում էր հաճելի անակնկալ, վերջիններիս համար պատրաստված էր իրենց համայնքների կանանց վերաբերյալ. ֆրանսիացի գործընկերների կողմից նկարահանված ֆիլմերի ցուցադրություն և մրցանակաբաշխություն, ինչպես նաև փոքրիկ ակնարկ՝ անցած ուղու մասին: Կանանց տրամադրություն շատ բարձր էր, և հաջողվել էր նրանց համար օրը վերածել տոնի:

Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՐՎՈՒՄ Ե ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ,
ԱՐՏԱՀԱՆՎՈՒՄ Ե ԱՇԽԱՐՀԻ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿՐՆԵՐ

1999թ. Հայաստանում հիմնադրված «ՍՊՍ Սիգարոն» ընկերությունը զբաղվում է բարձրակարգ սիգարետների արտադրությամբ և վաճառքով: Ընկերության արտադրանքն այսօր արտահանվում է աշխարհի տարբեր երկրներ: Սիգարոնի արտադրության հիմնական սկզբունքը բարձր որակն է և ծխելու հետևանքով առաջացող հիվանդությունների ռիսկերի էական նվազեցումը: Ընկերության աշխատանքները ղեկավարում է տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Վելիցյանը, նրա հետ էլ կայացավ մեր հարցազրույցը:

- Տիկին Վելիցյան, ընկերության արտադրանքն ապահովում է ընկերության շուկաներում են գրել իրենց որոշյալ տեղը, արտահանման ծավալները մեծացնելու ուղղությամբ ինչպիսիք աշխատանքներ են կատարվում:

- «ՍՊՍ Սիգարոն» ընկերության ռազմավարությունը կառուցվել է այսօր էլ կառուցվում է արտահանման քաղաքականության հիման վրա: Բոլոր շուկաներն էլ մեզ համար կարևոր են, այդ իսկ պատճառով ընդգծված առաջնություններ չեն դրվում: Դրանք ձևավորվում են մարկետինգային աշխատանքների ընթացքում՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ՝ ճանապարհ, կապեր, օրենսդրական արգելքներ և այլն:

Վերակազմավորումից հետո Սիգարոնի նոր սերնդի արտադրանքը վեց երկիր է արտահանվել՝ Ռուսաստանի Դաշնություն, Ուզբեկստան, Թուրքմենիա, Վրաստան, Ճապոնիա և Իրաք: Ակտիվ մարկետինգային աշխատանքներ են տարվում ամերիկյան, ասիական և եվրոպական մի շարք երկրների շուկաներում:

Ընկերության առաջնային ծրագրերից է տեսականու ավելացումը և արտահանման աշխարհագրության ընդլայնումը: Եթե մինչև վերակազմավորումը Սիգարոնի արտադրանքն աշխարհի շուրջ 30 երկիր էր արտահանվում, ապա այսօր ծրագրվում է գերազանցել այդ ցուցանիշը:

Չնայած այն հանգամանքին, որ «ՍՊՍ Սիգարոնը» արտահանման ուղղված ընկերություն է, մենք միշտ էլ կարևորել ենք հայկական շուկան, հայ սպառողի կարծիքն ու գնահատականը: Մեր մրցակցային առավելությունները ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայում բարձր որակն է, ինովացիոն տեխնոլոգիաներն ու հեղափոխական նորամուծությունները, որոնք կառուցվում են ծխելու հետևանքով առողջությանը հասցնող վնասի էական նվազեցման գաղափարի վրա: Այս գաղափարական հենքի վրա էլ 2014 թվականին ընկերությունը սպառողների ներկայացրեց իր նոր սերնդի սիգարետները: «ՍՊՍ Սիգարոն» ընկերությունը Սիգարոն արտադրանքին շուկայում հինգ տեսակի սիգարետ է թողարկում, որոնք

գտնվում են գնային և որակական բարձր հատվածում՝ ՍԻԳԱՐՈՆ ՌՈՅԱԼ, ՔԻՆԳ ՍԱՅՅԷ, ԷՔՍՏՐԱ ԼՈՆԳ, ՍՈՒՊԵՐ ՍԼԻՄՍ և ՈՒՍՏՐԱ ՍԼԻՄՍ: Նոր սերնդի սիգարոնները բարձր ինքնարժեքի, հետևաբար՝ բարձր գնի պատճառով դժվար հասանելի են սպառողների



լայն շերտերին, ինչով պայմանավորված էլ ընկերությունը թողարկել է Ցենտր անվանումով, համեմատաբար ցածր ինքնարժեքով, Էկոնոմ կարգի սիգարետներ, որոնք զգալի պահանջարկ ունեն արդեն ներքին շուկայում:

-Որպե՞նիք է ներմուծվում արտադրության համար անհրաժեշտ հումքը, հոսքագծերը, լաբորատոր սարքավորումները:

- ՍԻԳԱՐՈՆԻ բոլոր բաղադրիչները ձեռք են բերվում եվրոպական լավագույն ընկերություններից և ունեն հավաստագրեր: Սիգարոնի նոր սերնդի արտադրության համար օգտագործվում է բացառապես թարմ բերքի բարձրորակ ծխախոտ՝ ներկրված լատինամերիկյան և աֆրիկյան հայտնի պլանտացիաներից: Աշխարհում առաջին անգամ, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ, կատարվում է ծխախոտի բազմափուլ մաքրագրում: Արդյունքում հումքից հեռացվում են քաղցկեղածին թունավոր նյութերը՝ քլոր, ազոտ պարունակող պեստիցիդները, հետերոպոլիկ միացությունների բարդ մոլեկուլները: Մաքրագրման շնորհիվ վերանում են նաև ծխելուց հետո բերանում առաջացող տհաճ դառնահամը և դառնահոտը: Բացառիկ երևույթ է ընկերությունում ստեղծված բնական նյութի՝ ՊԵՐԼԻՏԻ հիմքով կոմբինացված գտիչ (ֆիլտր)-ծխափողը, որը կատարում է ծխի լիակատար

միկրոֆիլտրացիա: Պեռլիտի հավելումով շերտը, իր բաղադրության շնորհիվ, մինչև 90 % կլանում է ծխի մեջ առկա խեժը, նիկոտինը և ծխախոտի այրման ժամանակ արտազատվող բազմաթիվ քաղցկեղածին թունավոր նյութերը, ինչպես նաև կասեցնում է նոր նյութերի առաջացումը: ՍԻԳԱՐՈՆԻ արտադրության համար անհրաժեշտ հոսքագծերը և լաբորատոր սարքավորումներն ընկերության հատուկ պատվերով նախագծվել և պատրաստվել են եվրոպական հեղինակավոր ընկերությունների կողմից:

-Մանրի անվրանգության, որակի հետ կապված, ինչպիսիք են լաբորատոր պայմանները:

- Սիգարոնի արտադրության մեջ օգտագործվող հումքն ու նյութերը, ինչպես նաև պատրաստի արտադրանքը որակի ստուգման են ենթարկվում ընկերության լաբորատորիայում, որն ամբողջովին զինված է գերմանական հայտնի ընկերության բարձրակարգ սարքավորումներով: Լաբորատորիայում իրականացվում է նաև պատրաստի արտադրանքի որակի օպերատիվ ստուգում, որն համապատասխանում են ISO-ի միջազգային չափանիշներին: Որակի

ստուգումն իրականացվում է համաձայն համաժողովրդական հատկանիշների՝ արտաքին տեսքի, ֆիզիկական ցուցանիշների և ծխի քիմիական բաղադրության: Համաժողովրդական հանձնաժողովը ոչ պակաս, քան շաբաթ մեկ անգամ գնահատում է Սիգարոնի համաժողովրդական հատկանիշները՝ բույրը, համը, թնդությունը: Արտադրանքի արտաքին տեսքը մշտապես վերահսկվում է անմիջականորեն սիգարետի հոսքագծի վրա: «ՍՊՍ Սիգարոն» ընկերությունում գործող որակի ստուգման համակարգը հնարավորություն է տալիս թողարկել հաստատուն, բարձր որակի արտադրանք: Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, ծխելու դեմ ակտիվ պայքար է տարվում, որին իր ձևով և բովանդակությամբ բավական արդյունավետ մասնակցում է նաև ընկերությունը: Խոսքը ծխելու հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման մասին է:

Սիգարոն ընկերությունն իր ինտելեկտուալ և նյութատեխնիկական բազայով ունի զարգանալու մեծ հնարավորություն և կապիտալ խոշոր ներդրումների պարագայում կարող է դառնալ համաշխարհային ծխախոտային արդյունաբերության գլխավոր խաղացողներից մեկը՝ ինչն էլ ընկերության գլխավոր նպատակն է:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԽՃԱՆԿԱՐ

Ջերմամուտ, որը ապահովում է քաղցրահամ ջրով և սնունդով

Ավստրալիայում Մերդոկի համալսարանի ինժեներներն ու գիտնականները կառուցել են 170 մ² մակերեսով ջերմամուտ, որը վերջնական փորձարկումներն անցնելուց հետո, զանգվածային արտադրություն է ապահովելու:

Փչովի ջերմատուրն օրեկան ապահովվում է 8 մ³ քաղցրահամ ջրով, որը ստացվելու է աղի ջրից գոլորշիացման միջոցով, և մոտ 30 կիլոգրամ բանջարեղենով: Պարզ տեխնոլոգիաներով գործող ջերմատուրն փակ տիպի է, ավտոմատ կառավարմամբ, որտեղ գոլորշիացումն ու կոնդենսացումը հնարավորություն են տալիս կարգավորելու ջեռուցման և հովացման գործընթացները:

Կաշվե իրեր՝ միրգ-բանջարեղենից

Հարավային Հոլանդիայի Willem de Kooning ակադեմիայի մի խումբ ուսանողներ գրել են սուր սոցիալական հարցերից մեկի՝ թափոնների վերամշակման մի լուծում ևս:

Ռոթերդամի շուկայի աշխատողները օրեկան միջինում 3,5 տոննա գերհասունացած կամ տեսքը կորցրած միրգ և այլ մթերք են դնում նետում: Մշակելով մրգերի և բանջարեղենի չորացման իրենց նպատակներին համապատասխանող եղանակ՝ նրանք կաշվեման նյութ են ստեղծել, որից առայժմ պայուսակներ, լուսամուկներ են պատրաստում: Դրանցով հետաքրքրվել են BMW և Porsche ավտոմեքենաներին կաշվե նստարաններ տրամադրող ընկերությունները, որոնց հաճախորդները չեն ցանկանում, որ իրենց մեքենաներում որևէ կենդանա-

կան ծագման նյութ լինի:

Իսկ հնարամիտ ուսանողները շարունակում են զարգացնել ձեռք բերած հաջողությունները. օրինակ՝ ելակից պատրաստված գեղեցիկ պայուսակներն ավելի գեղեցիկ դարձնելու համար, դրանի և խնձորի հավելումներ են ավելացնում:

Այն հարցին, թե որն է իրենց ծավալած գործունեության հիմնական գաղափարը, ուսանողները վստահ պատասխանում են՝ սնունդը աղբ չի, եթե չես ուտում, կարելի է այն կիրառել:

Հերկելով Անգլիայի օրինակին...

Նոր Ջեյկնիան 3 փարուց իր քարածուխն արդեն չի օգտագործելու, և մինչև 2025 թվականը 90%-ով անցնելու է վերականգնվող էներգետիկայի օգտագործմանը:



Դա նրան դժվար չի լինի իրականացնել մի քանի առումներով. նախ, որ բոլոր ածխահանքերն արդեն փակել է, բացի երկուսից՝ միաժամանակ հասցնելով վերականգնվող էներգիայից օգտվողների տոկոսը 80-ի: Եվ որ, ի տարբերություն մի շարք երկրների, այստեղ վերականգնվող էներգիայի աղբյուրներից առկա է նաև գեոթերմալը:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿԱՐՏՈՖԻԼԻ և ԼՈԼԻԿԻ ՑԵՑԵՐԻ ԿԵՆՍԱԿՈՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՍԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Սկիզբը՝ Նախորդ համարում

Պայքարի միջոցառումները

Ցեցի պատճառած վնասը նվազագույնի հասցնելու համար՝ անհրաժեշտ է կիրառել կանխարգելիչ, ագրոտեխնիկական, քիմիական, կենսաբանական, մեխանիկական պայքարի համալիր միջոցառումներ:

Կանխարգելիչ միջոցառումներ

• Չի թույլատրվում ցեցով վարակված տարածքներից կարտոֆիլի պալարներ, լուլիկի պտուղներ և այլ մորմազգիների պտուղներ ներմուծել վարակագրած գոտիներ:

• Բեռնախցիկներում (կոնտեյներ) և պահեստներում անհրաժեշտ է իրականացնել կարտոֆիլի պալարների ֆունգիցիդային մեխիլ բրոմիդի կամ այլ ֆունգիցիդների կիրառումը:

• Կարտոֆիլի դաշտավայրում արտադրված կարտոֆիլի պալարները, որպես տնկանյութ, չօգտագործել:

• Խորհուրդ չի տրվում կարտոֆիլի տնկանյութի ձմեռային պահպանություն կարտոֆիլի տարածքում: Տնկանյութը պետք է ներկրել ցեցից գերծ գոտիներից, գարնանը՝ անմիջապես տունկից առաջ:

• Կարտոֆիլի դաշտավայրում հրաժարվել ամառնաացան կարտոֆիլի մշակությունից:

• Մորմազգիների համար նախատեսված դաշտերը շրջափակել (տարածական մեկուսացում) հացազգի մշակաբույսերի ցանքերով, որը կսահմանափակի այլ տարածքներից վնասատուի ներթափանցումը:

• Վեգետացիայի ընթացքում, ֆերոմոնային թակարդների միջոցով իրականացնել մորմազգիների ցանքերի հետագուտում (մոնիտորինգ): Թակարդները պետք է տեղադրել դաշտերի եզրերին՝ յուրաքանչյուր 100 մ վրա, ցանկալի է ճանապարհի երկայնքով (1 թակարդ՝ 5 հեկտարի հաշվով), կապելով փայտյա ցցերին, ընդ որում՝ թակարդի հատակը պետք է գտնվի հորիզոնական վիճակում, 40-50 սմ բարձրության վրա: Թակարդների միջոցով անցկացված ուսումնասիրությունները հնարավորություն կտան ճիշտ որոշել պայքարի միջոցառումների ժամկետները:

Ագրոտեխնիկական միջոցառումներ

• Բերքահավաքից հետո, ուշ աշնանը կատարել խորը վար: Հունվար ամսին, երբ հողը սառած է, կատարել կրկնվար, որի արդյունքում՝ վարելաշերտի ստորին հատվածում պատասպարված վնասատուներն ու հիվանդությունների հարուցիչները տեղափոխվելով հողի մակերես՝ ոչնչանում են:

• Կիրառել ցանքափոխանակություն՝ մորմազգիներով (կարտոֆիլ, լուլիկ, պղպեղ, սմբուկ), նախկինում զբաղեցված տարածքներում բացառել նույն ընտանիքի մշակաբույսերի մշակությունը:

• Կարտոֆիլի տունկը կատարել միայն առողջ տնկանյութով, 15 սանտիմետրից ոչ պակաս խորությամբ:

• Կանոնավոր կատարել բուկից, որպեսզի պալարները գտնվեն 5 սմ-ից ոչ պակաս խորությամբ հողաշերտի տակ, որտեղ կոծվարանա պալարների վրա վնասատուի ձվադրումը:

• Կարտոֆիլի բերքահավաքից 5-7 օր առաջ փրերը (կանաչ զանգվածը) հնձել, հավաքել, ոչնչացնել կամ հորել մինչև 50 սմ խորությամբ: Հակառակ դեպքում, փրերի չորանալուց հետո, թրթուրները գրկվելով կերից՝ անցնում են հողի տակ և հայտնվում պալարների վրա:

• Խստիվ արգելվում է կարտոֆիլի փրերը (կանաչ զանգվածը) դաշտից տեղափոխել այլ տարածքներ, լցնել ջրավազաններ և ջրատարներ:

• Հավաքել և ոչնչացնել դաշտերը շրջապատող մորմազգի մոլախոտային բուսականությունը:

Պայքարի քիմիական և կենսաբանական միջոցառումները

Վնասատուի հայտնաբերման դեպքում, հերթափոխային եղանակով, անհրաժեշտ է օգտագործել հետևյալ միջատասպան միջոցները (ինսեկտիցիդները)՝

- Բելտ (1.0 լ/հա)
- Մատչ (0.4 լ/հա)
- Ադմիրալ (0.5 մլ/հա)
- Կոնֆիդոր (0.3 լ/հա)
- Կոնֆիդոր մաքսի (0.1 լ/հա)
- Կալիպտո (0.3 լ/հա)
- Դանադիմ, 400 է.Ե. (2.0 լ/հա),
- Դեցիս, 2,5 %, է.Ե. (0,2 լ/հա),
- Չոլոն 35, (1,5-2,0 լ/հա),
- Արիվո է.Ե. (0,16 լ/հա),
- Շերպա, 25 է.Ե. (0,16 լ/հա) և բարձր կենսաբանական արդյունավետություն ունեցող այլ նյութեր:

Բարձր արդյունավետություն են ապահովում նաև՝

- Ֆիտովերմ Մ (0,5%) + Մատչ (0,05%),
- Ֆիտովերմ Մ (0,5%) + Ադմիրալ (0,05%),
- Ֆիտովերմ Մ (0,5%) + Ակտարա (0,08%),
- Ֆիտովերմ Մ (0,5%) + Կոնֆիդոր (0,1%)

բույսերի պաշտպանության միջոցների համակցումները:

Կենսաբանական պատրաստուկներից արդյունավետ են՝

- Բիոսոքսիբացիլինը (3-4լ/հա)
- Լեպիդոցիդը (3-4լ/հա):

Մշակումները հարկավոր է կատարել վնասատուի թիթեռների բացահայտվելուց անմիջապես հետո՝ չսպասելով թրթուրների ի հայտ գալուն: Միևնույն միջատասպան միջոցն օգտագործել առավելագույնը երկու անգամ: Միջատասպան քիմիական միջոցներով մշակումներն իրականացնել 10-15, իսկ կենսապատրաստուկներով՝ 6-8 օր ընդմիջումներով:

Պայքար կարտոֆիլի ցեցի դեմ պահեստարաններում

Ձմռան ընթացքում կարտոֆիլի ցեցի կուտակման, պահպանման ու տարածման վայր են հանդիսանում կարտոֆիլի պահեստները, որտեղ վնասատուն տեղափոխվում է դաշտից, պալարներից և շարունակում հետագա զարգացումը: Վնասված պալարների մեծ մասը փտում է, և կորուստը կազմում է 25-80 %:

Կարտոֆիլի պալարների վրա ցեցի վնասակարության աստիճանը պայմանավորված է վնասատուի զարգացման համար անհրաժեշտ նպաստավոր ջեր-



մաստիճանային ռեժիմով: Նվազեցնելով պահեստներում ջերմաստիճանը, հնարավոր է սահմանափակել վնասատուի զարգացումն ու բազմացումը:

Պալարները վնասվելուց պահպանելու համար՝ պահեստներում պետք է ապահովել 3-4°C ջերմաստիճան:

Կարտոֆիլի (տնկանյութ և պարենային) պալարները, պահպանման դեպքում առաջ, մշակել լեպիդոցիդ և բիոսոքսիբացիլին կենսաբանական պատրաստուկ-

ներով (0,3 և 0,5լ/տ, ջրի ծախսը՝ 80լ/տ):

Պայքարի միջոցառումները ջերմարաններում

• Ջերմատունը (ջերմոցը) և դրա անմիջական շրջակայքը պետք է մաքրել բույսերի մնացորդներից և մոլախոտերից, որպեսզի կանխվի վնասատուի տեղաշարժը նոր բույսերի վրա:

• Ջերմատուններում օդափոխող բացվածքների վրա տեղադրել մանր անցքերով ցանցեր՝ դրսից ցեցի թիթեռների թափանցումը կանխելու նպատակով:

• Մերմերի ցանքից առաջ սածիլանոցներն ախտահանել ծծումբով՝ ծխեցման եղանակով կամ ախտահանիչ այլ պատրաստուկով:

• Մերմերի ցանքից անմիջապես հետո սածիլանոցում տեղադրել մեկ հատ ֆերոմոնային թակարդ:

• Մերմերի ծլելուց հետո, ամեն օր, ստուգել սածիլների վիճակը՝ ուշադրություն դարձնելով բույսերի գագաթնային մասերին, քանի որ ցեցը (թրթուր) ի սկզբանե վնասում է գագաթները, ապա նոր՝ տերևները: Հայտնաբերելուց անմիջապես հետո կատարել բուժում՝ սրսկման եղանակով:

• Պայքարի համար կարելի է օգտագործել բույսերի պաշտպանության միջոցների հետևյալ խառնուրդը (10 լիտր ջրի համար):

- Ֆիտովերմ Մ (40 մգ) + Մատչ (10 մգ)
- Ֆիտովերմ Մ (40 մգ) + Ադմիրալ (4-5 մգ):

Բույսերի պաշտպանության միջոցների արդյունավետության բարձրացման համար խորհուրդ է տրվում նշված խառնուրդներին ավելացնել նաև Սիլվետ գուլդ՝ 3 մգ:

Մշակումները կրկնել 7-10 օր պարբերականությամբ:

Սալիժների տեղափոխումից 3-4 օր առաջ ջերմատունը ախտահանել ծծումբով՝ ծխեցման եղանակով, կամ այլ միջոցներով, ինչպես նաև ջերմատան կողպատերը սպիտակեցնել կրով, եթե դրանք քարե շարվածքով են: Ջերմատուններում, մինչև սածիլացումը, 1000 մ² հաշվով, տեղադրել 3-4 ֆերոմոնային թակարդներ, լուսային միջատասպան թակարդներ (маскитные ловушки), ինչպես միջատաբանական տսնձով, այնպես էլ էլեկտրական լարման 5-6 հատ և միջատաբանական տսնձով պատված տարբեր գունային ժապավեններ: Նշված թակարդների և կպչուն ժապավենների տեղադրումից 3 օր հետո կատարել հաշվարկ և պարզել ցեցի թիթեռների առկայությունը:

Ջերմատանը սածիլացումից հետո, ամեն օր ստուգել բույսերի տերևներն ու գագաթները: Եթե մեկ շաբաթվա ընթացքում սածիլների վրա նկատվում են ցեցի թրթուրից վնասված տերևներ, ապա անհրաժեշտ է կատարել բուժում՝ վերոհիշյալ պատրաստուկների նշված չափաբաժիններով: Ցեցի կողմից վնասված բույսերի բացակայության դեպքում, խորհուրդ է տրվում, 20 օր հետո, կատարել կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) բուժում: Բույսերի վեգետացիայի ընթացքում ցեցի թրթուրից վնասված տերևները պետք է կտրել մկրատով և հեռացնել:

Ար. Տեր-Գրիգորյան
ՀԱՄՀ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Չրագործության զարգացում



Հ ա յ ա ս տ ա ն ի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը, ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում, հրավիրել է չրագործության ամերիկացի մասնագետ Դիանա Դելոնգին՝ Արմավիրի և Արարատի մարզերի չրագործների հետ վարպետաց դասեր և խորհրդատվություն անցակցնելու համար: Փորձագետը Հայաստան է ժամանել F2F նախագծի հետ գործակցության շրջանակում:

Առաջին հանդիպումները տեղի են ունեցել Արմավիրի մարզի չրագործների հետ: Դիանա Դելոնգը հայ չրագործներին է ներկայացրել չրագաված պտուղների արտադրության տեխնիկան, չրագման եղանակները,

չրագման համար առավել արդյունավետ պտուղների ընտրության և փաթեթավորման եղանակների մասին տեղեկություն: Փորձագետը չրագործների հետ անցկացրել է նաև պրակտիկ դասընթացներ, որոնց ընթացքում չրագործներն անձամբ են կատարել չրերի արտադրության բոլոր քայլերը՝ պտուղների ընտրությունից մինչև չրագված արտադրանքի փաթեթավորումը: Դելոնգը չրագործներին ծանոթացրել է նաև մարկետինգի միջազգային չափորոշիչների և բրենդավորման մի քանի հանգուցային հմտությունների հետ:

«Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) 5-ամյա ծրագիրը մեկնարկել է 2013թ. օգոստոսի 1-ից և ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից: Ծրագրի նպատակն է՝ հզորացնել գյուղական համայնքները՝ տնտեսական զարգացման հնարավորություններով: Ծրագիրն ունի 3 բաղադրիչ՝ տեղական տնտեսական զարգացում, փոքր ենթակառուցվածքների զարգացում, գյուղական համայնքների բնության պահպանություն:

Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գլխավորությամբ, ծրագիրն իրականացնում են համայնքային զարգացման մեծ փորձ ունեցող «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնը» (CARD), Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատը և գործարար խորհրդատվություն իրականացնող «Ի-Վի Բոնասայթինգ» կազմակերպությունը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ՄԱՆԴԱՐԻՆ

Քչերը գիտեն, որ մանդարինի հայրենիքը Չինաստանն է: Ասիական պեղծություններում այն լայն տարածում է ստացել, քանի որ ցիտրուսային բոլոր մշակաբույսերի մեջ մանդարինն ամենաընդարձակապատեմն է: 19-րդ դարի սկզբին մանդարինը բերել են Եվրոպա, որտեղից էլ սկսվել է դրա տարածումը:

Մանդարինը հարուստ է B և P խմբի վիտամիններով, A պրովիտամինով, ակտրոբինային թթվով, հանքային և այլ աղերով: Ցիտրուսների նկատմամբ ալերգիայի, ստամոքսի և տասներկու մատնյա աղիքի խոցի, ստամոքսափութի բարձր թթվայնության, ստամոքսաբորբի, խոլեցիստիտի և հեպատիտի առկայության դեպքում մանդարինի օգտագործումը ցանկալի չէ: Մանդարինի հյութը կարող է պայքարել ջերմության դեմ, հագեցնել ծարավը, մաքրել հեղձուկով և բրոնխիտով հիվանդների թոքերը, ինչպես նաև վերականգնել ստամոքսի և աղիների միկրոֆլորան: Մանդարինի կեղևից ստացված հյութը նպաստում է ախտաբուժական, իսկ եփուկը փափկացնում է հազը: Մանդարինի եթերայուղը լավագույն միջոցն է ընկճախտի և վատ տրամադրության դեմ: Մանդարինի յուղը կիրառվում է դիմահարդարման պարագաների արտադրությունում: Այն օգտակար է տարբեր տեսակի մաշկերի և բոլոր տարիքային խմբերի համար: Արդյունավետորեն պայքարում է կնճիռների դեմ, հանգստացնում է նաև զգայուն մաշկը: Մանդարինի յուղի օգնությամբ կարելի է ազատվել նաև ցելյուլիտից: Մանդարինը ոչ միայն համեղ և հյութալի միտք է, որի հետ շատերս կապում ենք առաջիկա տոների տպավորությունները, այլ այն նաև բավական օգտակար է, հատկապես՝ երեխաների համար:

Նախևառաջ, այս միտք մեծ քանակությամբ վիտամին C է պարունակում, օգնում է օրգանիզմին՝ պայքարելու մրսածության և վարակիչ հիվանդությունների դեմ: Երկրորդ՝ մանդարինը պարունակում է նաև վիտամին «A», որն անհրաժեշտ է լիակատար տեսողության, ինչպես նաև լորձաթաղանթի մեմբրանների համար: Վիտամին A-ն նաև բարերար ազդեցություն է ունենում մաշկի վրա: Դրանով այս միտքը պարունակում է նաև B₁, K և D վիտամիններ: Մանդարինի բաղադրության մեջ երբեք չենք կարող հանդիպել ազոտային աղերի (սիտրատների), քանի որ նրանում մտնում է մեծ քանակությամբ կիտրոնաթթու: Մանդարինի հյութը խորհուրդ է տրվում հատկապես բարձր ջերմության դեպքում, քանի որ այն հագեցնում է ծարավը: Սակայն խմել այն ըմպելիքը կարելի է և հարկավոր է ոչ միայն հիվանդության պարագայում, այլ նաև առողջ ժամանակ՝ որպես կանխարգելիչ միջոց: Մանդարինն ունի նաև հակասնկային հատկություն և ճիճուներից դեմ պայքարի լավագույն միջոցներից է: Մանդարինն ու մանդարինի հյութը հակացուցված են երեխաներին միայն այն դեպքերում, երբ որոշակի խնդիրներ կան ստամոքսի և մարսողության հետ կապված, ինչպես նաև՝ հեպատիտի, ալերգիայի, լեղապարկի բորբոքման կամ երիկամների հիվան-

դության պարագայում: Այն մարդկությանը հայտնի է եղել դեռևս հին ժամանակներից: Ինչպես գիտենք, մանդարինը պարունակում է շատ վիտամիններ ու օգտակար նյութեր: Մանդարինի համակարգված օգտագործումը նպաստում է արյան ճնշման իջեցմանը և խոչընդոտում աթերոսկլերոզի զարգացումը:

Մանդարինի հյութի մեջ եղած կալցիումը, մագնեզիումը կարգավորում են մարսողական համակարգի աշխատանքը, ինչպես նաև կարգավորում նյութափոխանակությունը: Մանդարինը կանխում է նաև լյարդի ճարպակալումը, բացի այդ, վիտամին A-ի մեծ պարունակությունը նվազեցնում է լյարդի քաղցկեղի առաջացման վտանգը: Մանդարինի հյութը դրականորեն է ազ-



դում երեխաների վրա: Օրվա մեջ 100գ մանդարինի հյութի գործածությունը կարող է կանխել ռախիտի զարգացումը: Մանդարինի չորացրած կեղևներից պատրաստված թուրմը դրական է ազդում է մարսողությունը, օգնում է հազի, սրտխառնոցի դեպքում, ինչպես նաև՝ ունի խորհրաբեր նշանակություն: Դրա համար անհրաժեշտ է 2 ճաշի գոլալ մանդարինի մանրացրած կեղևի վրա լցնել 300 մլ եռուր, թրմել մի քանի ժամ, բաժանել 3 մասի և խմել սուուղ ընդունելուց 20 րոպե առաջ:

Թարմ մանդարինի հյութը օգնում է նաև սնկային հիվանդությունների դեպքում, եթե այն ըստ էք ախտահարված մասին: Այն նաև բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը, ամրապնդում է անոթներն ու մաքրում թոքերը լորձուկից: Դրանով պատրաստելու համար անհրաժեշտ է լվացված մանդարիններից հեռացնել կեղևն ու կորիքները, միջուկն անցկացնել մաղաղցով ու թարմ վիճակում խմել: Նույնիսկ խորհուրդ է տրվում առավել ունենալ 1 բաժակ մանդարինի հյութով: Ստամոքսի և երիկամների հետ խնդիրներ ունեցողներին խորհուրդ է տրվում օգտագործել մանդարինի հյութ, քանի որ այն գրգռիչ ազդեցություն կարող է ունենալ: Ընդհանրապես մանդարինը հակացուցված է գաստրիտի, խոլեցիստիտի, ստամոքսի խոցի, 12-մատնյա աղիի և բոլոր տեսակի հեպատիտ հիվանդությունների դեպքում:

Բացի բուժական նպատակներով օգտագործելուց, մանդարինից պատրաստում են նաև շատ համեղ ուտեստներ՝ մուրաբաներ, աղցաններ:

**Թարգանությունը՝
Լիլիթ Գասպարյանի**

Հոն



Պտուղը հայրենի է հնագույն ժամանակներից, հափկները հայրենաբերվել են Շվեյցարիայում, որոնք ավելի քան 5000 տարվա վաղեմություն ունեն: Հոնագինների ընդհանրված ընդգրկում է ավելի քան 30 տեսակներ: Ունեն տերևաթափ ծառի կամ թփի տեսք, կան բազմամյա խորաբույսեր, մշտադալար տեսակներ: Հին Հունաստանում և Հռոմում բույսը շարժարձի է եղել. պտուղները մշակել և դրել են աղի մեջ, ինչպես ձիթապտուղը: Հին ժամանակներում հոնը համարել են արյունոտ ծառ, քանի որ աշնանը մաքուր ծիլերը կարմրում են:

Ըստ մեկ այլ ավանդազրույցի՝ այս ծառից են պատրաստել Սուրբ Խաչը: Հոնը եղել է Երուսաղեմում աճող ամենամեծ ծառատեսակը: Սակայն այն փոքրացրել և վերափոխել են, ճյուղերը կախվել են ներքև, ծաղկի թերթիկները՝ դարձրել չորս հատ և «խաչել», առէջքները կարմրել են, փշերը՝ ստացել գամերի տեսք, իսկ պտուղների հյութը՝ արյան գույն: Փայտանյութը շատ ամուր է և ճկուն, չմաշվող և դիմացկուն: Հնում պատրաստել են նիզակներ և նետեր, նավակներ, դանակներ, մաքրք, ժամացույցների անվիկներ, կոճակ: Պտուղը կիրառում են կաշվեգործության մեջ, նուրբ, մոխրականաչավուն ներկանյութ ստանալու համար: Հոնի արականը կամ սովորական՝ C. max տեսակը հնագույն ժամանակներից աճում է մեր հայրենիքում: ՀՀ բնական պայմաններում տարածված է հյուսիսարևելյան շրջանների, Սյունիքի խառն անտառներում՝ ծովի մակերևույթից մինչև 1100-1400 մ բարձրության վրա: Սովորաբար, ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն բույս է, ոչ պահանջկոտ հողատեսակի

հանդեպ: Ոսկեղեղին ծաղիկները հավաքված են վահանաձև ծաղկափթեթությունների մեջ, ծաղկում է փետրվարի վերջին-մարտին: Ծաղկման շրջանը 10-14 օր է: Մեղրատու բույս է, ծաղկափոշին՝ վաղ գարնանային մեղվահացի հումքի մատակարար: Պտղաբերում է 12-րդ տարում (մինչև 30 կգ), հասուն ծառը տալիս է մոտ 100 կգ բերք, ապրում է 120 տարի, հաճախ՝ մինչև 250: Հայերենում անվանվում է նաև զողալենի՝ հավանաբար այն տեսակներն են, որոնք ունեն թփանման խոտաբույսի տեսք:

Հնագույն ժամանակներից հայտնի են եղել բույսի բուժիչ հատկությունները: Օգտագործվում է միայն ժողովրդական բժշկության մեջ: Բուժահումք են հանդիսանում արմատը, կեղևը, տերևը, պտուղը, նույնիսկ կորիզը: Պտուղը հարուստ է P ակտիվություն ունեցող նյութերով (ռուտին) և ակտրոբինաթթվով, ինչի շնորհիվ ունի ճնշումն իջեցնող հատկություն: Հարուստ է կարոտինով, պարունակում է տոկոֆերոլներ (E), ունի հակաօքսիդանտ հատկություն: Հոնի պտուղը լավացնում է ախտաբուժական, սթափեցնում գինովցած մարդուն, որպես կանխարգելիչ միջոց՝ խորհուրդ է տրվում, եթե կա սնդիկից կամ կապարից թունավորվելու վտանգ: Պտղի մեջ պարունակվող պեկտինը և բջջանյութը նպաստում են թոյների հեռացմանն օրգանիզմից: Հյութն օգտակար է շաքարային դիաբետի, կարծրախտի (սկլերոզ), մրսածության, գիրության դեպքում, կանխարգելում է աճխաչրերի փոխակերպումը ճարպի:

Պտուղը հարուստ է օրգանական թթուներով՝ խնձորի, կիտրոնի, սաթի (մինչև 3,5 տոկոս): Չինացիները պտղի թուրմով բուժում են սկանջների աղմուկը, հյութը և օշարակը խորհուրդ են տալիս՝ որպես օրգանիզմն ամրացնող միջոց: Հոնի հյութը բուժում է խորը վերքերը, գինու հետ խառնուրդը հեռացնում է իժի թույնը: Պտղի արմատի կամ կեղևի եփուկը կիրառում են մալարիայի, տենդի, թոքախտի բուժման ժամանակ: Հոնի և վայրի տանձենու պտուղներից պատրաստված կրմալոտն օգտակար է միզապարկի, երիկամների բորբոքման դեպքում, նպաստում է մանր քարերի հեռացմանը: Հոնի և խնձորի թանձր եփուկն ավելացնում է արյունը:

Զգուշացում: Պտուղը և թարմ հյութը հակացուցված են՝ ստամոքսափութի բարձր թթվայնության դեպքում:

ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ Է ԱԳՐԱԼՐԱՏՈՒԼ

2015 թ. ԲԵՏԵՆՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԳՐՈՎԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր

1 տարվա գինը՝ 3960 դրամ	1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ	6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 120 դրամ	1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Չայֆոսթ», «Չայմամուլ», «Պրես-Արտաձե» կազմակերպությունները

ԱԳՐԱԼՐԱՏՈՒԼ
AGRONEWS

Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության (նախարարություն) «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն **Ա. ՎԱՀՆՅԱՆ**
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ **Լ. ՇԱԽՆԱՋԱՐՅԱՆ**

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ գրանցման թիվ՝ 01 Մ՝000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 128
ստորագրված է տպագրության 04.11.2015 թ. տպագրվում է Գ-ԱՎ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա